

ԳՐԻԳՈՐԻ ՎԿԱՅԱՍԻՐԻ ԵՂԲԱԼԻ ՏԵՐ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԱՐՁԵԱԼ
ՊԱՏՉԱՍԲ Ի ՎԵՐԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԻՅ ԵՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ

Սկիզբը՝ ժ.:

Նորին Գրիգորիսի եւ Վկայասիրի եղբար ներսիսի ձայոց¹

Տէր² մեր Յիսուս Քրիստոս յոր-
ժամ եկն ի մեր բնութիւնս խոնար-
հութեամբ եւ սիրով փրկել³ յամե-
նայն⁴ մեղաց եւ ի չարէ թշնամոյն
ազատել⁵: Էառ զմեր բնութիւնս եւ
էանց ընդ կեանս մեր⁶ առանց մե-
ղաց: Ետես զմեր տկարութիւնս⁷,
գիտէ զնեղիչս⁸ եւ զհալածիչս⁹ մեր,
որ հանապազ կու որոսայ¹⁰ զմեզ ի
կորուստ եւ յապականութիւն ի
ձեռն ծուլութեան եւ անհնազան-
դութեան: Որով¹¹ ինքն անկաւ ի վե-
րին փառաց իւրոց: Սատանայ ծու-
լացաւ ի սպասաւորութենէ արար-
չին եւ անհնազանդ եղեւ կամաց

նորայ եւ բարձրամտեաց¹² ընդ դեմ
տեառն իւրոյ: Զայս երկու մահա-
դեղս¹³ արբոյց նախահաւրն մերում
Աղամայ ի դրախտին՝ ծուլանալ ի
պատուիրանաց տեառն եւ¹⁴ անհ-
նազանդ լինել¹⁵ կամաց արարչին,
որով կորոյս զնա¹⁶ յանմահական
փառացն, յորմէ ինքն անկաւ: Զի
կամքն Աստուծոյ այս է, որ կամի¹⁷
հանապազ¹⁸ արթունս լինել
ի կամսն¹⁹ իւր եւ ժիր յամենայն²⁰
բարէգործութիւնս: Զայս եղ պա-
տուիրան նախահաւրն²¹ ի դրախ-
տին գործել²² եւ պահել²³: Գործելն՝
զժրութիւն աղաւթիցն²⁴ ցուցանէ, եւ

¹ Բ Նորին Գրիգորիսի ասացել սահման
պատճառ եւ որդորումն աղօթից Գ Նորին
Գրիգորիսի ասացեալ սահման եւ պատճառ
եւ յորդորումն աղօթից

² ԲԳ Տէրն

³ Ա փրկեալ ԲԳ ի փրկեալ զմեզ

⁴ Ա ի յամենայն

⁵ ԱԲԳ թշնամոյն ազատեալ

⁶ Ա մեր կեանս Բ կենս մեր

⁷ Ա էտես զմեր տկարութիւնս ԲԳ էտես
զտկարութիւնս մեր

⁸ ԲԳ զնեղիչ

⁹ Ա զհալածիչս ԲԳ զհալածիչն

¹⁰ ԲԳ որոսայ

¹¹ ԲԳ որով եւ

¹² Ա բարձրամտեալ

¹³ ԲԳ դեղմահացուս

¹⁴ Գ > եւ

¹⁵ Ա լինեալ Բ լինել ի

¹⁶ Ա կորուս ԲԳ կորոյս զնոսայ

¹⁷ ԲԳ + զմեզ

¹⁸ ԲԳ > հանապազ

¹⁹ ԲԳ կամս

²⁰ Ա ի յամենայն Բ յամենայն յամենայն Գ
ամենայն

²¹ Բ նախայհաւրն Գ նախահօրն

²² ԱԲ գործեալ

²³ ԱԲ պահեալ

²⁴ Գ աղօթիցն

պահելն՝ զարթնութիւնն:¹ Հպատակ կալ պատուիրանացն Աստուծոյ, յամենայն բարիսն առաւել² խոնարհութեամբ եւ սիրով զաւրանալ³, զի ուր այս երկուքս մերձ ոչ են. դիւրաւ որսացեալ լինին ի չարէն եւ կորնչին⁴: Իսկ որ եստեղծ⁵ զմեզ Աստուած եւ ետես⁶ առաջին պատուիրանն ոչ պահեալ զառեալն⁷ ի նմանէ: Եկն դարձեալ առ ազգս մարդկան ողորմելով բնութեանս մերում. եկն կանգնել⁸ զգլորեալսն⁹, գտանել¹⁰ զկորուսեալքս, յարուցանել¹¹ զանկեալքս, լուսաւորել¹² զխաւարեալքս: Ուսոյց մեզ վերստին¹³ ճանապարհք¹⁴ դառնալ ադրէն¹⁵ արիութեամբ առաջին¹⁶ փառսն յորմէ անկաք ծուլութեամբ եւ¹⁷ անհնազանդութեամբ: Եւ երկրորդեաց մեզ զառաջին պատուիրանն, զոր¹⁸ ոչ պահեցաք: Եւ¹⁹ ինքն

Տէրն մեր արինակ²⁰ մեզ.²¹ ինքն կատարեաց եւ մեզ ուսոյց անձամբ եւ բանիւք: Եւ ոչ միայն խոնարհ եղեւ, այլ²² հնազանդեցաւ մահու չափ եւ մահու խաչի: Եւ ասէ, ուսարուք յինէն, զի ես հեզ եմ եւ խոնարհ սրտիւ²³: Եւ այս բարուց է առաքինութիւն հեզ եւ խոնարհ լինել²⁴: Իսկ դարձեալ զպատուիրանն առաջին²⁵ արդեամբք եւ բանիւ մեզ ուսոյց եւ աւանդեաց²⁶ արթուն լինել²⁷ եւ ոչ ծուլանալ յաղաւթիցն²⁸: Որպէս ի²⁹ նորին յաւետարանսն կան բազումք առակք³⁰ եւ արինակ³¹ վասն արթնութեան եւ աղաւթից³² արիութեամբ: Եւ ոչ³³ միայն արինակաւ³⁴ ետ. այլ³⁵ զբանս աղաւթիցն³⁶ ուսոյց մեզ որպէս ասէ. այսպէս կացէք յաղաւթս³⁷. հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո եւ այլն³⁸: Եւ

¹ ԲԳ + եւ² Գ յառաւել³ Գ զօրանալ⁴ ԱԲ կորնչին⁵ ԱԲ էստեղծ Գ ստեղծ⁶ ԱԲ էտես Գ եւ էտես⁷ Ա ոչ պահեալ զառեալն Բ ոչ պահել զտուեալն Գ ոչ պահեալ տուեալն⁸ ԱԲ կանկնեալ⁹ Բ զգլորեալքս Գ զգլորեալքս¹⁰ ԲԳ ի գտանեալ¹¹ ԱԲ յարուցանեալ¹² Ա լուսաւորեալ¹³ ԱԲ վերստին¹⁴ ԲԳ ճանապարհ¹⁵ ԲԳ > անդրէն¹⁶ ԱԲԳ յառաջին¹⁷ Գ > եւ¹⁸ ԲԳ + յառաջն¹⁹ ԲԳ + եղեւ²⁰ Գ օրինակ²¹ ԲԳ + եւ²² ԲԳ այլեւ²³ ՏԵՍ ՄԱՏԹ. ԺԱ. 29²⁴ ԱԲ լինեալ²⁵ Ա զպատուիրան առաջինն²⁶ Բ աւանդեց մեզ Գ աւանդեաց մեզ²⁷ Ա արթուն լինեալ Բ արթունս լինեալ Գ արթունս լինել²⁸ Ա ի յաղաւթիցն Գ յաղթիցն²⁹ Ա որպէս³⁰ Ա առաք³¹ Գ օրինակ³² Գ աղթից³³ Ա ոչ³⁴ Գ օրինակաւ³⁵ ԲԳ այլեւ³⁶ Գ աղթիցն³⁷ Գ յաղթս³⁸ ՏԵՍ ՄԱՏԹ. Զ. 9

հրամայեաց յամենայն ժամ ասել¹ զայս. եւ յամենայն ժամ² զայս³ յայտնէ, թէ չէ պարտ⁴ դադարել զայս յասելոյ: Զի երկոտասան ժամ է արն. նոյնպէս եւ գիշերն, եւ յամենայն ժամ պարտէ յիշել⁵ զաստուած եւ աղաւթել⁶ առ նա⁷: Եւ ոչ եղ չափ եւ սահման աղաւթից⁸, զի ամենայն գործոյ չափ կայ եւ սահման, եւ աղաւթիցն ոչ կայ⁹ չափ եւ սահման եւ ոչ¹⁰ ժամանակ: Որպէս եւ¹¹ ինքն Տէրն մեր ասէ, թէ¹² յամենայն ժամ աղաւթս արարէք¹³, եւ յամենայն ժամ¹⁴ կրթէր զաշակերտսն¹⁵ կալ արթունս¹⁶ եւ աղաւթել¹⁷, որպէս¹⁸ ինքն ել ի լեռն կալ յաղաւթս եւ հաներ զգիշերն ի գլուխ յաղաւթսն¹⁹ Աստուծոյ: Եւ ի ժամ խաչին առանձինն լեալ²⁰ աղաւթէր²¹: Եւ աշակեր-

տացն ասէր, արթուն կացէք²² եւ աղաւթեցէք շմտանել ի փորձութիւն²³: Եւ առակաւք²⁴ ի բազում տեղիս ցուցանէր եւ յորդորէր աղաւթել²⁵, որպէս ասէ, եղիցին գաւտիք²⁶ ձեր պնդեալ²⁷ ընդ մէջ²⁸: Այս զարթնութենէն ասէ, եւ ճրագունս²⁹ լուցեալս, այս զարիութենէն ասէ, զմտացն եւ զաշացն³⁰: Եւ դուք պատրաստ կացչիք: Զի յորժամ գայցէ եւ բախիցէ զդուրս տանն վաղվաղակի բանայցէք³¹: Այս զհնազանդութեան³² եւ զանդադար աղաւթելն³³ ասէ մինչեւ ցաւր³⁴ մահուանն: Եւ դարձեալ ասէ, յաղաւթս³⁵ կացէք, զի մի լիցի փախուստն ձեր ի³⁶ ձմերանի³⁷, զի կարի ծանր է ձմեռան փախուստն³⁸: Զի ելանէ մարդ ի տանէ ի լերինս փախստական³⁹ լինել⁴⁰: Եւ մի յաւուր շաբաթու, զի այս կարի ծանր է ան-

¹ Ա ասեալ² Գ ժամն³ ԲԳ զայդ⁴ ԲԳ թէ ոչ երբէք պարտ է⁵ ԱԲ յիշեալ⁶ ԱԲ աղաւթեալ⁷ ԲԳ նայ⁸ Բ աղաւթիցն Գ աղօթիցն⁹ Ա կա¹⁰ Գ > ոչ¹¹ ԲԳ > եւ¹² ԲԳ > թէ¹³ Տէ՛ս ՄԱՏԹ. ԻԶ. 41¹⁴ Ա յամենայն ժամ ժամ¹⁵ ԲԳ + իւր¹⁶ ԲԳ արթունս լինել¹⁷ Ա աղաւթեալ Գ աղօթել¹⁸ Բ + եւ¹⁹ Գ յաղօթսն²⁰ Գ լել²¹ Գ աղօթէր²² Գ կացէ²³ Տէ՛ս ՄԱՐԿ. ԺԳ. 38²⁴ Գ առակօք²⁵ Գ աղօթել²⁶ Գ գօտիք²⁷ Բ պնդել Գ պնդեալք²⁸ Տէ՛ս ՂՈՒԿ. ԺԲ. 35²⁹ ԲԳ ճրակունս³⁰ ԲԳ զաշիցն³¹ Տէ՛ս ՂՈՒԿ. ԺԲ. 36-40: ԲԳ բանալ³² ԲԳ զհնազապազ] զհնազանդութեան³³ Գ աղօթելն³⁴ Գ ցօր³⁵ Գ յաղօթս³⁶ ԲԳ > ի³⁷ Տէ՛ս ՄԱՏԹ. ԻԳ. 20³⁸ ԲԳ ձմեռն] ձմեռան փախուստն զի³⁹ ԱԲ փախստական⁴⁰ Ա լինեալ

ցանել¹ զաւրինաւքն² Աստուծոյ, եւ շարժել³ զոտս եւ փախչել⁴։ Բայց այս երկու դժուարութիւնս՝ զհանդերձեալ գալստեանն⁵ եւ զմահուն աւրէն⁶ ասէ։ Եւ յաղաթս⁷ կացէք զի մի ձեզ այնպիսի դժվարութիւն հանդիպեսցի։ Այլ զի աղաւթիք⁸ պարապեալ կեանքն ի խաղաղութեան մնասցէ եւ մահուամբ⁹ խաղաղութեամբ փոխիլ յաշխարհէս¹⁰։ Եւ առաքելոցն ասէր¹¹ առական, թէ¹² գիտէր տանուտէրն տանն թէ¹³ որում¹⁴ պահու գող գա¹⁵, հսկէր եւ ոչ տայր թոյլ ական հատանել¹⁶։ Եւ որ¹⁷ ձեզդ ասեմ ամենեցունդ¹⁸ ասեմ, արթուն կացէք եւ յամենայն ժամ աղաթս¹⁹ արարէք, զի արժանի լիցիք²⁰ այնմ²¹ ամենայնի²² նեղութեանց որ լինելոց է ի վերայ ամենայն երկ-

րի՝ նեղութիւնք, արհաւիրք, սովք եւ սրածութիւնք, բարկութիւնք, հալածումն եւ այլ բազում չարիք²³, որպէս պատմէ աւետարանն²⁴, զի աղաւթիք²⁵ ի յայսպիսեացս փրկին եւ յետոյ արժանի լինին կալ առաջի Աստուծոյ սրբութեամբ։ Եւ այլ բազում առական եւ աւրինակաւ²⁶ ոչ դադարէր Քրիստոս ստիպել²⁷ զաշակերտսն յաղաթսն²⁸ եւ յարթուն²⁹ կենալ։ Որպէս ասէ, դատաւոր մի էր ի քաղաքի եւ այրի³⁰ մի կայր³¹ ի նմին քաղաքի։ Եւ գայր կինն այրի³² առ դատաւորն եւ անդադար բողոքէր, թէ դատ արային ձ յոսոխէն³³ իմմէ³⁴, եւ թէպէտ դատաւորն յումէքէ ոչ երկնչէր³⁵, բայց ի³⁶ ստէպ թախանձանացն այրոյն արար նմա դատաստան³⁷։ Եւ արդ³⁸ պարտ է մեզ ստէպ աղաւթիւք³⁹ ձանձրացուցանել⁴⁰ զաստուած, զի արասցէ մեզ դատ յոսոխէն⁴¹ մերմէ սատանայէ, եւ

¹ ԱԲ անցանեալ² Գ զօրինօքն³ Ա շարժեալ⁴ Ա փաղչեալ ԲԳ փախչել⁵ ԱԲ գալստեանն⁶ Գ օրէն⁷ Գ յաղօթս⁸ Գ աղօթիւք⁹ ԲԳ ի մահուանն¹⁰ Ա ի յաշխարհէս¹¹ ԲԳ ասէ¹² ԲԳ եթէ¹³ ԲԳ եթէ¹⁴ Բ յորում¹⁵ ԲԳ գայր գող¹⁶ ԱԲ հատանեալ։ ՏԵ՛ս ՄԱՏԹ. ԻԴ. 43¹⁷ ԲԳ զոր¹⁸ ԲԳ ամենացուն¹⁹ Գ աղօթս²⁰ ԲԳ լինիցիք²¹ Ա այնմն²² ԲԳ ամենայն²³ ԲԳ > չարիք²⁴ ՏԵ՛ս ՄԱՐԿ. ԺԳ. 37, ՄԱՏԹ. ԻԴ. 7²⁵ Գ աղօթիւք²⁶ Գ > եւ աւրինակաւ²⁷ ԱԲԳ ստիպեալ²⁸ Ա ի յաղաթսն Գ յաղօթս²⁹ Բ յարթունս Գ արթունս³⁰ ԲԳ այր³¹ Բ կեր Գ էր³² ԲԳ > այրի³³ ԲԳ յոսոխէ³⁴ Ա իմէ³⁵ ԲԳ ոչ յումէքէ երկնչէր եւ ոչ ամաչէր³⁶ ԲԳ > ի³⁷ ՏԵ՛ս ՂԱԿ. ԺԸ. 2-5³⁸ ԲԳ եւ այսպէս³⁹ Գ աղօթիւք⁴⁰ ԲԳ ձանձրացուցանել⁴¹ ԲԳ յոսոխէ

յայս շարալլուկ¹ կենացս, որպէս ասէ յետ առակի դատաւորին: Թէ իսկ Աստուած ոչ արասցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ աղաղակեն առ նա² ի տուէ³ եւ ի գիշերի, եւ երկայնամիտ եղիցի: Այո⁴, ասեմ ձեզ, արասցէ վրէժխնդրութիւն նոցա⁵ վաղվաղակի⁶: Այսու ուսուցանէ զմեզ, զի մի անյոյս լինիցիմք, այլ պարտ է յուսալ եւ հաւատալ, թէ լսէ Աստուած աղաւթից⁷ մերոց: Եւ դարձեալ ասէ, թէ պարտ է յաղաթս կալ⁸ եւ մի ձանձրանալ: Եւ դարձեալ առական բարեկամին ասէ, երթեալ առ նա⁹ աղաչէր ի մէջ գիշերին, թէ տուր ինձ ասէ երիս նկանակս, զի բարեկամ իմ եկն առ իս, եւ նա¹⁰ պատասխանեալ¹¹, թէ ոչ կամիմ տալ: Բայց դարձեալ ի ստէպ խնդրելոյն ետ նմա¹², ոչ վասն բարեկամութեան, այլ վասն ժտութեան¹³ աղաչանացն¹⁴: Թէ¹⁵ առակս զայլ ինչ ցուցանէ, բայց¹⁶ բանքս

վասն ստէպ աղաւթիցն¹⁷ է եւ անդադար խնդրելոյն յԱստուծոյ, զկենցաղաւարութիւն եւ զհոգւոյն¹⁸ փրկութիւն: Եւ առաքեալն Պաւղոս¹⁹ ասէ ի բազում տեղիս, ստիպէ²⁰ յորդորեալ²¹ աղաւթել²² որպէս ասէ, աղաւթից²³ ստէպ կացէք²⁴: Եւ Տիմոթէոսի գրէ ասելով²⁵, յաղթս²⁶ կալ ի ժամու եւ ի տարաժամու²⁷: Զի ոչ գոյ ժամ²⁸ աղաւթիցն²⁹, այլ պարտ է յամենայն ժամ աղաւթել³⁰: Եւ Դավիթ պարծանքն մարգարէիցն³¹ ի սաղմոսին իւրում ի բազում տեղիս³² ասէ: Զայնիւ իմով ես առ տէր կարդացի³³, եւ դարձեալ ի կարդալ իմում լուալ³⁴ ինձ Աստուած³⁵, ես առ Աստուած կարդացի ընդ երեկոյս ի վաղորդայն ի հասարակ աւուր³⁶: Եւ արհնեցից զտէր յամենայն ժամ³⁷,

¹⁷ Գ աղոթիցն¹⁸ ԱԲԳ զհոգոյն¹⁹ Գ Պօղոս²⁰ ԲԳ + եւ²¹ ԲԳ յորդորէ²² Ա աղոթեալ Բ աղաւթեալ Գ աղօթել²³ Գ աղօթից²⁴ Տէ՛ս ՀԻՈՄ. ԺԲ. 12: Բ կացիք²⁵ ԲԳ ասելով²⁶ ԱԳ յաղթս²⁷ Բ տարայժամու²⁸ Ա Զի ոչ ժամ կա²⁹ Գ աղօթիցն³⁰ Բ աղաւթեալ Գ աղօթել³¹ ԲԳ > պարծանքն մարգարէիցն³² ԲԳ + զմեզ ուսուցանէ, որպէս³³ Տէ՛ս ՍԱՂՄ. Գ. 2³⁴ Բ լու եւ Գ լուալ եւ³⁵ ԲԳ > ինձ Աստուած: Տէ՛ս ՍԱՂՄ. Գ. 5³⁶ Բ ուր: Տէ՛ս ՍԱՂՄ. ԾԳ. 18³⁷ ԲԳ + յամենայն ժամ¹ Ա շարալլուկ Բ շարայլլուկ² ԱԲ նայ³ ԱԲ տվէ⁴ ԲԳ Այոյ⁵ Բ նոցայ⁶ Տէ՛ս ՂՈՒԿ. ԺԸ. 7-8⁷ Գ աղօթից⁸ Գ յաղթս] յաղաթս կալ⁹ ԱԲ նայ¹⁰ ԱԲ նայ¹¹ ԱԳ պատասխանեալ¹² ԱԲ նմայ¹³ Գ + եւ¹⁴ Տէ՛ս ՂՈՒԿ. ԺԱ. 5-8¹⁵ ԲԳ թէպէտ¹⁶ Գ > բայց

աւրհնութիւն նորա¹ ի բերան իմ է²: Զայս³ զանհամար⁴ աղաւթիցն⁵ ասէ: Նոյնպէս Աննայ աղաւթելով⁶ էառ⁷ զորդէծնութիւն, եւ ամենայն մարգարէք եւ առաքեալքն եւ արդարքն աղաւթիւք⁸ հաշտեցուցին զԱստուած: Որպէս Մովսէս զծովն բաժանեաց եւ զփարաւոնն⁹ ընկղմեաց¹⁰: Եւ Յովնան¹¹ աղաւթիւք¹² ի խորոց անդնդոց¹³ ի փորոյ կիտէն ելաւ: Նինուէացիքն աղօթիւք¹⁴ եւ պահաւ¹⁵ ապրեցան ի կործանմանէն: Եւ Դանիէլ աղաւթիւք¹⁶ զվիշապսն եսպան¹⁷ եւ զառիւծսն սանձեաց: Երեք¹⁸ մանկունքն ի հնոցին աղաւթիւք¹⁹ զհուրն շիջուցին: Եղիայ աղաւթիւք²⁰ զերկինս փակեաց²¹: Յեսու որդի Նաւեայ²² աղաւթիւք²³

յերկինս²⁴ զարեգակն կանգնեցոյց²⁵ եւ զԵրիքով կործանեաց: Դաւիթ աղաւթիւք²⁶ պարսաքարեաց²⁷ զԳաղիաթ եւ եսպան²⁸ եւ աղաւթիւք²⁹ ապրեցաւ ի նեղչաց իւրոց եւ աղաւթիւք զդեւն հալածէր ի Սաւուղայ: Եզեկիայ³⁰ աղաւթիւք³¹ զՍենքերիմ³² թագաւորն եհար³³ եւ փախստական³⁴ արար: Եւ կարի յոյժ զորաւոր է³⁵ աղաւթքն³⁶ ի յաւգնականութիւն կենաց³⁷ մարդկան: Եւ թէ ոք անկանի ի փորձութիւն որպէս³⁸ առաջին թագաւորքն³⁹: Թէպէտ որ անկանէին⁴⁰ ի փորձութիւն, բայց աղաւթիւք⁴¹ ամբողջ ելանէին⁴² ի փորձութենէն⁴³: Որպէս Երեմիայ⁴⁴ աղաւթիւք⁴⁵ ելաւ⁴⁶ ի գբէն⁴⁷: Եւ Պետ-

¹ Բնորայ² Տէս ՍԱՂՄ. ԼԳ. 2³ ԲԳ այս⁴ ԲԳ + եւ զանթիւ⁵ Գ աղօթիցն⁶ Գ աղօթելով⁷ Բ իառ⁸ Գ աղօթիւք⁹ Բ զփարոն Գ զփարաւոնն¹⁰ Ա ընկղմեաց¹¹ ԱԲԳ Յունան¹² Գ աղօթիւք¹³ ԱԲ անդընդոց¹⁴ ԱԳ աղօթիւք¹⁵ Գ պահօք¹⁶ Գ աղօթիւք¹⁷ Ա էսպան ԲԳ սպան¹⁸ ԱԲԳ էրեք¹⁹ Գ աղօթիւք²⁰ Գ աղօթիւք²¹ Բ փակեց²² ԲԳ > որդի Նաւեայ²³ Գ աղօթիւք²⁴ Ա ի յերկինս Գ զերկինս²⁵ Ա կանկնեցոյց Բ կանկեցուց²⁶ Գ աղօթիւք²⁷ Բ պարսաքարեաց²⁸ ԱԲԳ էսպան²⁹ Գ աղօթիւք³⁰ Բ էզէկիայ Գ Եզէկիել³¹ Գ աղօթիւք³² ԱԲ զՍէնիքարիմ Գ զՍենեքարիմ³³ ԱԲ էհար³⁴ ԱԲ փախստական³⁵ ԲԳ են³⁶ Գ աղօթքն³⁷ ԱԲ կէնաց³⁸ ԲԳ + եւ³⁹ ԲԳ սուրբքն] թագաւորքն⁴⁰ ԲԳ անկան⁴¹ Գ աղօթիւք⁴² Բ էլանի⁴³ ԲԳ փորձէն⁴⁴ ԱԲ էրէմիայ⁴⁵ Գ աղօթիւք⁴⁶ ԱԲ էլաւ⁴⁷ Ա ի գբէն Բ ի գփոյն Գ ի գբոյն

րոս կապեալ ի Հերովդիէ¹ կրկին շղթաիւք² շնորհաւքն³ Աստուծոյ եւ աղաւթիւք⁴ հրեշտակք⁵ ի գիշերին հանին⁶ զնա⁷: Պաւղոս⁸ եւ Շիղայ կապեալ⁹ եւ եղեալ ի բանտին¹⁰, կապանքն արձակեցան եւ աղաւթիւք¹¹ բանտն¹² շարժեցաւ, եւ բանտապանքն¹³ հաւատացին յԱստուած¹⁴ եւ մկրտեցան: Եւ մի ոք պատճառեսցէ վասն ծուլութեան եւ ասասցէ, թէ անարժան եմ ոչ լսէ ինձ Աստուած զինչ աւգուտ¹⁵ է աղաւթել¹⁶: Այս պատճառ սատանայի է, որ անյուսուծիւն եւ ծուլութիւն արկանէ ի միտս մարդկան¹⁷ եւ ոչ տայ աղաւթել¹⁸ եւ աղաչել զԱստուած: Զի գիտէ սատանայ որ մեզ մեծ շահ կայ յաղաւթիցն¹⁹, եւ նորա մեծ վնաս եւ կորուստ²⁰: Վասն այսորիկ

¹ ԱԲ ի Հերովդիէ

² Ա շղթաիւք

³ Գ շնորհօքն

⁴ Բ աղաւթիւքն Գ աղօթիւքն

⁵ ԲԳ հրեշտակն

⁶ Բ էհան Գ Եհան

⁷ ԲԳ զնայ + եւ

⁸ Գ Պօղոս

⁹ Բ կապել

¹⁰ Ա բանդին ԲԳ բանդ + եւ

¹¹ Բ աղաւթիւք եւ] եւ աղաւթիւք Գ աղօթիւք եւ] եւ աղաւթիւք

¹² ԱԲԳ բանդն

¹³ ԱԲ բանդապանքն

¹⁴ ԲԳ ի Քրիստոս] յԱստուած

¹⁵ Գ օգուտ

¹⁶ Բ աղաւթելն Գ աղօթելն

¹⁷ ԲԳ > մարդկան

¹⁸ Բ աղաւթել Գ աղօթել

¹⁹ Գ յաղօթիցն, Բ + եւ մէծ աւգուտ Գ + եւ մեծ օգուտ

²⁰ Բ + հասանէ յաղաւթիցն Գ + հասանէ աղօթիցն

ծուլութիւն ի մեզ²¹ արկանէ եւ զմեզ²² յաղօթից²³ շնորհացն զրկէ եւ հանապազ մարտի ընդ մեզ: Եւ²⁴ բազումք ի մեղաւորաց աղաւթեցին²⁵ եւ լուաւ Աստուած որպէս նինուէացիքն որ չարք էին եւ պիղծք²⁶, վասն այսորիկ կամէր սատակել²⁷ զնոսա²⁸ Աստուած եւ անցոյց զպատուհասն: Եւ զի կամի Աստուած զամենեցուն աղաւթելն²⁹, որպէս ասէ, դարձարուք առ իս եւ ես դառնամ առ ձեզ³⁰: Նոյնպէս եւ քեզ լսէ եւ ոչ³¹ արգելու զքեզ խաւսել ընդ Աստուծոյ³² աղաւթելով³³ եւ կալ առաջի նորա³⁴ մաքուր սրտիւ: Բայց ի յաղաւթելն³⁵ զհոգք³⁶ մարմնական եւ զերկրաւոր իրս ի բաց դիր ի մտացդ: Եւ թէ³⁷ կամիս³⁸ ի լսելիսն Աստուծոյ խաւսիլ³⁹, որպէս ոք ի թագաւոր հա-

²¹ Բ մէզ

²² Բ զմէզ

²³ ԱԳ ի յաղօթիցն Բ ի յաղաւթիցն

²⁴ ԲԳ + զի

²⁵ Ա աղաւթեցին Գ աղօթեցին

²⁶ ԱԲ պէղծք

²⁷ Ա սատակեալ

²⁸ ԱԲԳ զնոսայ, Բ + բայց աղաւթեցին եւ լուաւ նոցայ Գ + բայց աղօթեցին եւ լուաւ նոցայ

²⁹ Ա աղաւթեալն Գ աղօթելն

³⁰ Տէս ՄԱՂ. Գ. 7

³¹ ԲԳ ոչինչ] ոչ

³² ԲԳ յԱստուծոյ

³³ Գ աղօթելով

³⁴ Բ նորայ

³⁵ Գ յաղօթելն

³⁶ Ա զհոգ

³⁷ Բ էթէ Գ Եթէ

³⁸ ԲԳ կամեսցիս

³⁹ Բ խաւսել Գ խօսել

մարձակի խաւսիլ¹: Ոչ այլ ուրեք զմիտսն եւ զաշսն եւ զձեռսն պարապէ, բայց միայն ի կամս թագաւորին: Եւ այնպէս ահիւ կայ եւ խաւսի² եւ առնու զինչ խնդրէ: Սոյնպէս եւ առաջի Աստուծոյ պարտ է ձեզ կենալ: Զհպարտութիւն հան ի մտացդ եւ ի հոգւոյդ³ եւ զաղտեղութիւն⁴ եւ զատելութիւն եւ զոխս եւ զքէն: Զի այսոքիկ են որ ոչ տան թոյլ տեսանել զլոյսն Աստուծոյ⁵: Զայդպիսի խաւարդ⁶ հալածական արա⁷ ի մտացդ սիրով եւ խոնարհութեամբ, եւ⁸ մանաւանդ զընչասիրութեան ախտն⁹: Զի այն է պատճառ ամենայն վնասուց մերոց եւ ազահութիւն¹⁰: Զայսոսիկ ի բաց հան ի մտացդ եւ բարուցդ, զի մի թաղեսցիս իբրեւ ի մէջ միգի¹¹:

¹ Բ խաւսեալ Գ խօսել

² Գ խօսի

³ ԱԲ հոգոյտ Գ հոգոյդ

⁴ ԲԳ > զաղտեղութիւն

⁵ ԲԳ Զի այսոքիկ իբրեւ զթանձր մէզ եւ զմառախուղ պատեն ի վերայ մտացն եւ ոչ տան տեսանել զլոյսն Աստուծոյ] Զի այսոքիկ են որ ոչ տան թոյլ տեսանել զլոյսն Աստուծոյ

⁶ ԱԲ խաւարտ

⁷ ԱԲԳ արայ

⁸ ԲԳ > եւ

⁹ ԲԳ աղտն

¹⁰ ԲԳ ազահութիւն ընչից] եւ ազահութիւն

¹¹ Բ + Եւ միտքդ ծանրանայ այդպիսի բեռամբդ, ոչ կարէ վերաբերեալ զաղաւթսն առ Աստուած: Այլ ի ծանրութենէ հոգոց եւ ցնորից եւ ընչասիրութենէ միշտ ի վայր քարշել լինի: Գ + Եւ միտքդ ծանրանայ այդպիսի բեռամբդ, ոչ կարէ վերաբերեալ զաղաւթսն առ Աստուած: Այլ ի ծանրութենէ հոգոց եւ ցնորից եւ ընչասիրութենէ միշտ ի վայր քարշեալ լինի:

Եւ ապայ դադարեցո¹² զլեզուդ¹³ ոչ ի չար խաւսելոյ¹⁴ միայն, այլ յանաւագուտ¹⁵ եւ յաւելի բանից¹⁶: Եւ զայն խաւսեա¹⁷ որ քեզ աւզուտ¹⁸ է եւ քո ընկերին¹⁹ եւ շինութիւն եւ լիութիւն լսողացն²⁰ եւ յաւրհանութիւն Աստուծոյ: Եւ²¹ յոյժ պիտանի բան լինի²² վասն կարեաց, իսկ որ քան զայս աւելորդ է, դատարկութիւն է եւ ի մեղս համարած: Եթէ ոք ոչ հարցանէ զքեզ, դու յառաջախաւս²³ մի լինիր: Եւ յաւտար²⁴ բան մի ընկնիլ²⁵ եւ մի զայլոց բան քեզ որոճումն առնել²⁶ իբրեւ զանասուն²⁷: Եւ զաւր ինչ խաւսիլ²⁸ կամիս յառաջ զմտաւած, թէ բարի է եւ աւզուտ²⁹ լաւողին: Եւ ապայ խաչ հան ի վերայ³⁰ բերանիդ³¹ եւ կնքէ զմիտք³² նշանաւ խաչին Քրիստոսի եւ ապայ խաւ-

¹² ԱԲԳ դադարեցոյ

¹³ ԱԲԳ զլեզուտ

¹⁴ Գ խօսելոյ

¹⁵ Ա ի յանաւագուտ Գ յանօգուտ

¹⁶ Գ խօսից] բանից

¹⁷ ԱԲ խաւսեայ Գ խօսեայ

¹⁸ Գ օգուտ

¹⁹ ԲԳ ընկերացն

²⁰ ԱԲ լսողացն

²¹ ԲԳ + Եւ որ

²² ԲԳ բան է] բան լինի

²³ Ա յառաջախաւս Գ յառաջախօս

²⁴ Բ ի յաւտար Գ ի յօտար

²⁵ ԲԳ ընկնիլ

²⁶ ԲԳ առնել որ] առնել

²⁷ ԲԳ + այլ բանիւք եւ զրուցով որոճայ

²⁸ Գ խօսիլ

²⁹ Գ օգուտ

³⁰ ԲԳ > ի վերայ

³¹ Ա բերանիտ ԲԳ բերանոյտ

³² Ա զմիտք

սեա¹: Եւ² հանապազ տրտմութիւն³ զգեցո⁴ մտացդ քոց⁵, որպէս թէ սգաւոր ես⁶, զի անդի ծնանին առաքինութիւնք եւ արտասոււնք: Զի որպէս ի մութն եւ ի թանձր ամպէ⁷ անձրեւ ցաւդէ⁸, եւ յայսպիսի տրտմութեն է որ վասն Աստուծոյ լինի: Զկաթուածս արտասուացն է լուացումն⁹ ամենայն ախտից մարմնոյն: Կշռեա¹⁰ զգործս քո ընդ պատուիրանացն Աստուծոյ, եւ զիտացիր անարժան լինել զքեզ քան զամենայն մարդ: Ասա¹¹ ի միտս քո, եթէ տեղեկէին¹² մարդիկ¹³ գաղտնի գործոց իմոց, ոչ միայն անարգէին զիս այլ իբրեւ զգազան հալածական եւ քարկոծ առնէին¹⁴ զիս: Եւ ապայ¹⁵ մինչեւ¹⁶ ի միջակ հանդերձիւ վարեսջիր, զի մի հպարտութիւն եւ սնափառութիւն տիրեսցէ քեզ: Զի եթէ խիստ խոշոր հագնիս¹⁷, հպար-

տանաս ի վերայ այլոց, թէ¹⁸ քան զայլս¹⁹ խիստ եմ ճգնութեան²⁰: Եւ թէ²¹ ազնիւ եւ կակուղ հագնիս²², ի սնափառութիւն տանի զքեզ²³: Եւ յորժամ զարթիցես ի գիշերի քնոյ²⁴, յայնժամ²⁵ ծունր կրկնեսջիր երիցս անգամ²⁶, եւ ապայ²⁷ գնա²⁸ ի տեղի աղաւթիցն²⁹ եւ գոհացիր յԱստուծոյ³⁰: Եւ յայնմհետէ սկիզբն արա³¹ պատրաստ լինել³² առ յաղաւթան³³, եւ զղջումն առ ի միտս քո եւ տրտմութիւն ած բարուցդ³⁴ եւ ած զմտաւ զաւր³⁵ վախճանին³⁶: Զի իբրեւ զորոգայթ հասանիցէ ի վերայ եւ յիշեա³⁷ զայն, թէ³⁸ դատարկ եւ անպատրաստ զքեզ գտանէ: Վա՛յ աւուրն այնորիկ, որ այնպէս եւ

¹⁸ ԲԳ իբրեւ թէ] թէ

¹⁹ ԲԳ զայլսն

²⁰ ԲԳ խիստ ես ի ճգնութեան] խիստ եմ ճգնութեան

²¹ ԲԳ եթէ

²² Բ հագնիս Գ > հագնիս

²³ Գ > Եւ թէ ազնիւ եւ կակուղ հագնիս, ի սնափառութիւն տանի զքեզ

²⁴ ԲԳ > քնոյ

²⁵ Ա յայնժամն

²⁶ Ա անկամ

²⁷ Գ ապա

²⁸ Ա գնայ ԲԳ երթիջիր

²⁹ Գ աղօթիցն

³⁰ Ա ի յԱստուծոյ

³¹ ԱԲԳ սկիսբն արայ

³² Բ պատրաստական լինեալ Գ պատրաստական լինել

³³ Բ աղաւթսն Գ աղօթիցն

³⁴ Ա ած բարուցս Բ ած ի բարստ Գ ած ի բարսդ

³⁵ Գ զօր

³⁶ ԱԲ վախճանին

³⁷ Բ յիշեալ

³⁸ ԲԳ եթէ

¹ Բ խաւսեայ Գ խօսեայ

² ԲԳ + դու

³ ԲԳ զտրտմութիւնք

⁴ ԱԲ սգեցոյ

⁵ ԱԲ քո

⁶ ԲԳ > ես

⁷ Ա ի մութն եւ ի թանձր ամբէ ԲԳ ի թանձր եւ ի մութն ամբէ:

⁸ Բ ցաւդէն Գ ցօղեն

⁹ Ա զկաթուածս արտասուացն է լվացումն ԲԳ Զկաթուածս արտասուացն բէրեն ի վայր լուացումն

¹⁰ Բ կշռեա

¹¹ ԱԲ Ասայ

¹² Գ տեղեկէին

¹³ Բ մարդիք

¹⁴ Ա արնէին

¹⁵ Բ ապա

¹⁶ ԲԳ մինչեւ

¹⁷ ԲԳ հագանիս

ունայն¹ ի գործոց եւ մերկ ի բարե-
աց կալոց եւ առաջի Աստուծոյ: Եւ
այնպիսի² ահիւ³ եւ դողութեամբ⁴ ի
ծունր իջիր⁵ առաջի Աստուծոյ⁶ եւ
ասա⁷ զՏէր եթե զշրթունան⁸, եւ
ուշիմն լեր առ քահանայական⁹
աղաւթսն¹⁰: Եւ զմիտքդ հետ սաղմո-
սին եւ աղաւթիցն¹¹ կալ, ի յաջ եւ
յահեկ մի նայիլ¹²: Եւ ի ժամ աղաւ-
թիցն¹³ մի յարեմուտս դառնալ եւ
հայիլ, զի ընդ յԱստուծոյ միայն¹⁴
հայիր: Եւ¹⁵ յաւազակացն¹⁶ եւ¹⁷ ի դի-
ւացն¹⁸ եւ ի սատանայէ¹⁹ գանգատէ²⁰
առաջի դատաւորին Աստուծոյ:
Յոյց զքեզ որ մերկացուցին եւ վէրս
ի վերայ եդին եւ չարաչար կողոպ-
տեցին: Յայտնեալ²¹ զկեղէքանս վի-
րացդ²² մեղաց²³ զոր առեր ի սատա-

նայէ, զի կարիվեր խոցեցին ցեղ ու
ցեղ եւ ազգ ի ազգ ի մեղաւք²⁴: Եւ
այնպէս համարէ, թէ առաջի
աչացդ²⁵ ունիս զԱստուած ի տեսու-
թիւն ընդ աջմէ քումմէ²⁶, զի մի սա-
սանեսցից: Ընդ առաւատս²⁷ մի
նիրհեսցես քնով հեղգութեամբ: Զի
յայնմն ժամուն մարտնչին²⁸
աղաւթք²⁹ սրբոցն ընդ յԱստուծոյ³⁰,
եւ յորժամ կամենաս աղաւթել³¹,
առանձնացիր ի տեղի ինչ անզ-
բաղ³² մեկուսի ի մարդկանէ: Համ-
բարձի³³ յերկինս զձեռսդ³⁴ ընդ ձե-
ռացդ³⁵ եւ զմիտսդ³⁶ առ ի բաց, եւ³⁷
եթէ կարես³⁸ զգլխոյդ³⁹ պատրուակդ
այլ⁴⁰: Եւ⁴¹ եթէ դիպողից է ժամա-
նակն, զմիտքդ բաց⁴² խոստովանու-
թեամբ: Ի բաց հան զհնութիւն մե-
ղացն⁴³ եւ նախ⁴⁴ ասա⁴⁵ այսպէս: Գո-

¹ ԲԳ եւ այնպէս թափուր] որ այնպէս եւ
ունայն

² Ա այնպէս

³ ԲԳ ահով

⁴ ԲԳ > եւ դողութեամբ

⁵ ԲԳ ի ծունկս ել] ի ծունր իջիր

⁶ ԲԳ տեառն] Աստուծոյ

⁷ ԱԲԳ ասայ

⁸ ԲԳ շրթունան

⁹ Ա քահանական

¹⁰ Գ աղօթսն

¹¹ Բ աղաւթացն Գ աղօթիցն

¹² Ա նաիլ

¹³ Գ աղօթիցն

¹⁴ Բ + պշուցել Գ + պշուցեալ

¹⁵ ԲԳ > եւ

¹⁶ ԲԳ զաւազակացն

¹⁷ ԲԳ > եւ

¹⁸ ԲԳ զդիւացն

¹⁹ ԲԳ զսատանայէ

²⁰ Ա կանգատէ

²¹ ԱԳ Յայտնեալ

²² ԲԳ վիրաց

²³ ԲԳ մեղացն

²⁴ Գ մեղօք

²⁵ ԲԳ աչացս

²⁶ Ա քումմէ

²⁷ Գ առաւատս

²⁸ ԱԲ մարտնչին

²⁹ Գ աղօթք

³⁰ ԲԳ առաջի Աստուծոյ] ընդ յԱստուծոյ

³¹ Ա աղաւթք Բ աղաւթեալ Գ աղօթել

³² ԱԲ անբաբաղ Գ անսպաղ

³³ ԲԳ համբարձ

³⁴ ԲԳ զձեռս

³⁵ ԲԳ ձեռացս

³⁶ Ա զմիտս ԲԳ զմիտսս

³⁷ ԲԳ > եւ

³⁸ ԲԳ + եւ

³⁹ ԱԲԳ գլխոյս

⁴⁰ ԲԳ > այլ

⁴¹ ԲԳ > եւ

⁴² ԲԳ բաց յառաջ զմիտքդ մերկացոյ]

զմիտքդ բաց

⁴³ ԲԳ + զձաժկոյթն

⁴⁴ ԲԳ նախառաջին

⁴⁵ ԱԲԳ ասայ

հանամ զքէն Տեր Աստուած մեր վասն ամենայն բարեացդ¹ զոր արարեր բնութեանս մերում: Գոհանամ զքէն Երրորդութիւն սուրբ, որ նախախնամութեամբ² քով երկայնամիտ լինիս ի վերայ մեր եւ ոչ սատակես զմեզ կայծակամբք հրոյ ի մեղանշելն մեր³ առաջի քո: Գոհանամ զքէն անոխակալ Տէր եւ բարէգութ⁴, զի կամիս զկեալն մեր եւ հասանել փրկութեան կենացն եւ ժառանգորդ⁵ լինել⁶ անպատում բարեացն որ ի քէն: Եւ արդ եկի կալ առաջի քո ամաչեցեալ⁷ դիմօք⁸ ոչ ունելով զհամարձակութիւն⁹ ի պատարագս, զոր ի մաքրութիւն մտացս արժան էր ընծայել¹⁰ քեզ, որպէս ուսուցեր մեզ¹¹: Այլ միայն մաղթանս աղաւթից¹² ի խաւարեալ¹³ հոգւոյ¹⁴ լուծելոյ¹⁵ ի լքելի բարբառ աւրհնութեան¹⁶ բարեաց: Եւ իսկ այսպէս ի կատարել¹⁷ գործոյ հաշտութեան: Այլ միայն բանիւ լոկով

բերեալ դնեմ առաջի քո, ամենագութ եւ¹⁸ ողորմած, շնորհեա¹⁹ ինձ հանճար գիտութեան խնդրել զողորմութիւն²⁰ ի քէն առատապէս ի պարգեւեալն²¹, եւ կամ²² հեղուլ խնդութեամբ ի վերայ այնոցիկ որ հայցեն²³, ուսո²⁴ ինձ բախել զդուռնդ²⁵ մարդասէր մեծատանդ: Եւ լցո²⁶ զկարատութիւն²⁷ հոգւոյ²⁸ թշուառիս հոգւոյ²⁹ իմոյ յամենաբարի ի շտէմարանեալ³⁰ քո գանձուցդ, զովացո³¹ զշրթունս տոչորեալ³² եղկելոյս ի բղիմանէ³³ ցաւոյ³⁴ աղենական աւրհնութեանդ: Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ³⁵ փառք յաւիտեանս, ամէն:

Տէր Աստուած ողորմի ստացողիս գրոցս եւ կարդացողացդ եւ լսողացդ. ամէն³⁶:

¹ ԲԳ բարեաց

² ԱԲ նախախնամութեամբ

³ ԲԳ մերում

⁴ ԲԳ անոխակալ եւ բարէգութ Տէր

⁵ Ա ժառանգորդ ԲԳ ժառանգաւոր

⁶ Ա լինեալ

⁷ ԲԳ ամաչեցել

⁸ ԱԳ դիմօք

⁹ Ա համարձակութիւն

¹⁰ Ա ընծայեալ ԲԳ ընծայել

¹¹ Գ ինձ] մեզ

¹² Գ աղօթից

¹³ Բ խաւարել

¹⁴ ԱԲԳ հոգոյ

¹⁵ Բ լուծելոյ

¹⁶ ԲԳ աւրհնաբանութեան

¹⁷ ԲԳ ի կատարել

¹⁸ ԲԳ > եւ

¹⁹ ԱԲԳ շնորհեալ

²⁰ ԲԳ + քո

²¹ ԲԳ պարգեւելն

²² ԲԳ + ի

²³ ԲԳ հայցենն

²⁴ ԱԲԳ ուսոյ

²⁵ Գ զդուռն

²⁶ ԱԲԳ լցոյ

²⁷ Գ զկարատութիւն

²⁸ ԱԲԳ հոգոյս

²⁹ ԱԲԳ հոգոյ

³⁰ ԲԳ շտէմարանել

³¹ ԱԲԳ զովացոյ

³² Բ տոչորել

³³ ԲԳ ի բղիմանէ

³⁴ Գ ցօղոյ

³⁵ ԲԳ մարդասիրին] Աստուծոյ մերոյ

³⁶ ԲԳ > Տէր Աստուած ողորմի ստացողիս գրոցս եւ կարդացողացդ եւ լսողացդ. ամէն

ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՍԱՅԵԱԼ ԲԱՆ ԽՐԱՏՈՅ՝ ՀՈԳԻՈՅ²

Ես³ ծառայ Աստուծոյ եւ ըն-
թերցող այս բանիցս, ի վերայ ամե-
նայն առաքինութեանցս⁴ եւ զայս
կալ ի մտի, որ ոչ հպարտանաս⁵
ու քան զամենայն մարդ լաւ ասես
զքեզ⁶: Ո՛չ⁷ այլ թերի⁸ համարեա⁹
զքեզ եւ անպիտան¹⁰ իբրեւ պար-
տական¹¹ հրամանացն Աստուծոյ:
Որպէս Տէրն հրամայեաց թէ զա-
մենայն առաքինութիւնս կատա-
րէք, ասասցիք թէ ծառայք անպի-
տանք եմք Աստուծոյ, զոր պարտե-
աք առնել արարաք¹²: Եւ հանապազ
զայս¹³ զմտաւ ածելով եւ ամալթով
կալ առաջի Աստուծոյ¹⁴: Զաչքդ¹⁵ ի
վայր նայեցո¹⁶ յերկիր եւ ի քեզ հա-
յեաց¹⁷ եւ ծանիր թէ հող ես, զի մի
մեծամտեսցիս: Եւ զմիտքդ¹⁸ ի վեր
առ Աստուած կալ որ գիտենաս¹⁹ թէ

նա²⁰ է արարիչ եւ տէր քո: Եւ ական
կալ հանդերձեալ²¹ դատաստանին,
եւ ապա²² սիրեա զընկեր քո ան-
նենգ եւ անկեղծ սիրով եւ հաւա-
տով²³: Մի զինչս սիրել²⁴, մի ազահեր
ի ստանալն, եւ որ քան զքեզ ցած
են, այնոցիկ զբարի խրատն տուր,
եւ որ քան զքեզ բարձր են եւ փա-
ռաւոր կամ շնորհաց²⁵ կամ աստի-
ճանով կամ արաւք²⁶ ի վեր²⁷, այնո-
ցիկ սրտի մտաւք հնազանդեա²⁸, եւ
մի նախանձիր ընդ շնորհս ումեք
կամ փառս²⁹ եւ ինչք³⁰: Այլ թէ զոք
առաքինի տեսանես, ջանա³¹ որ
նմանես նմա³² սիրովն Աստուծոյ.
հաւատոցն համբերութեան, խո-
նարհութեան, ժուժկալութեան,
ճգնութեան, աղաւթիցն, պահոցն,
յուսոցն, երկայնմտութեան, հեզու-
թեան, անընչութեան, անոխակա-
լութեան, հանդարտութեան, բա-
րուցն ցածութեան, եւ այլ այսպի-
սեացս նման զոր տեսանես զոք

¹ Ա խրատու² ԱԲ հոգոյ³ Բ Ով] Ես⁴ Բ առաքինութեանց⁵ Բ չհպարտանաս⁶ Բ որպէս քան զամենայն մարդ լաւ ես]
ու քան զամենայն մարդ լաւ ասես զքեզ⁷ Բ > Ո՛չ⁸ ԱԲ թերի⁹ Բ համարեալ¹⁰ Բ + եւ¹¹ Բ զպարտական¹² Տէս ՂՈԻԿ. ԺԷ. 10¹³ Բ զայս¹⁴ Բ Տեառն քո] Աստուծոյ¹⁵ Բ զաչքս¹⁶ Բ հայեաց] նայեցոյ¹⁷ Ա հայեց¹⁸ Ա զմիտք Բ զմիտքս¹⁹ Ա գիտէնաս Բ գիտես²⁰ Բ նայ²¹ Ա հանդերձեալ²² Բ ապա²³ Ա սէրէ զընկեր քո աննենգ եւ անկեղծ
սիրով եւ հաւատով Բ զընկեր քո աննենգ եւ
անկեղծ սիրով սիրեայ հաւատով²⁴ Բ սիրեալ²⁵ Բ + եւ²⁶ Բ հասակաւ] արաւք²⁷ Բ + են²⁸ Բ խոնարհեաց] հնազանդեա²⁹ Բ ընդ փառք³⁰ Ա ինչք³¹ ԱԲ ջանայ³² ԱԲ նմայ

աւրինակ բարեաց: Զանա¹ որ ի քեզ տպաւորես, իբրեւ իմաստուն ճարտարագիր որպէս յաւրինակէ ի քեզ նկարագրեա² զամենայն³: Եւ որ քեզ չար թուի⁴ դու զայն քո ընկերին բարի մի ասել⁵, զի այդ խաբէութիւն է եւ նենգութիւն⁶: Գինի շատ մի ըմպել⁷ որ չհարբենաս⁸, եւ թէ⁹ հանդիպի ընդ երեք¹⁰ փոքր ամանն¹¹ ի վեր մի անցնիլ, այլ զայն¹² վասն հարկին առ եւ աւրհանէ զարարիչն եւ զհարկին տէրն¹³ եւ գոհացիր զտոռոզէն¹⁴: Ընդ անպարկեշտ¹⁵ կանայս¹⁶ ամենեւին¹⁷ մի նստիլ¹⁸ եւ մի խաւսիլ եւ մի յաւժարիր¹⁹ զնոցա²⁰ խաւքն լսել²¹: Զի խաւք կանանց պոռնկաց²² իբրեւ զգեղուն նետ²³ են որ խոցեն զհոգիս լսաւորն եւ սպանանեն: Եւ յոր-

ժամ խաւսիլ հանդիպի քեզ ընդ կին մարդ վասն հարկի ինչ եւ այլ²⁴ իրաց, զի հարկ է քեզ ընդ ամենայն մարդ խաւսիլ²⁵, յայնժամ²⁶ զակնդ ընդ նա մի տալ²⁷, այլ ի քո առջեւ²⁸ նայիր եւ զհարկի բանն ասա²⁹: Եւ մաւտ ի կանայս³⁰ շատ մի յամեր, զի ընդելութիւն լինի եւ ընդելութեամբն սատանայի բան լինի³¹: Եւ³² ծաղրով ընդ կին մարդ ամենեւին մի խաւսիլ: Այլ ի պատիր բանիցն նորա³³ փախիր իբրեւ ի թունաւոր³⁴ աւձէ: Զի խաւք նոցա³⁵ զբազումս որսան ի կորուստ, զի թէպէտ որ³⁶ քաղցր թուին³⁷ խաւք³⁸ նոցա³⁹ լսողացն որպէս Սողոմոն ասէ, թէ մեղր կաթէ ի շրթանց կանանց պոռնկաց⁴⁰, բայց յետոյ դա՛ռն է⁴¹ քան զլեղի, եւ վա՛յ մարդոյն այն⁴² որ զնայ ըմպէ⁴³: Որդեակ յամենայն

¹ ԱՖ Զանայ

² Ա նկարագրեաց Բ նկարագրեայ

³ Ա զամենայն

⁴ ԱՖ թվի

⁵ Բ մի ասել

⁶ Բ զի այն խաբէութիւն եւ նենգութիւն է:

⁷ Ա ըմբել Բ ըմբեր

⁸ Ա չհարպենաս Բ արբենաս

⁹ Բ էթէ

¹⁰ Ա էրեք Բ էրեքն

¹¹ Բ > փոքր ամանն

¹² Բ գէրեքն] զայն

¹³ Բ > եւ զհարկին տէրն

¹⁴ ԱՖ տվողէն

¹⁵ Ա յանպարկեշտ

¹⁶ Բ կանայսն

¹⁷ Բ ամենեւին

¹⁸ Բ > մի նստիլ եւ

¹⁹ Բ յուժարիր

²⁰ Բ զնոցայ

²¹ ԱՖ լսեալ

²² ԱՖ պոռնկաց

²³ Բ զնետ դեղուն

²⁴ Բ > եւ այլ

²⁵ Բ խաւսել

²⁶ Ա յայն ժամն

²⁷ Բ ի նա մի տար

²⁸ Ա յառջեւ Բ առջեւտ

²⁹ ԱՖ ասայ

³⁰ Բ կանայսն

³¹ Բ > սատանայի բան լինի

³² Բ կամ

³³ Բ բանից նոցայ

³⁴ Բ թիւնաւոր

³⁵ Բ նոցայ

³⁶ Ա թէպէտ որ Բ թէպէտ

³⁷ ԱՖ թվին

³⁸ Բ բանք

³⁹ Բ նոցայ

⁴⁰ Բ կնոչ պոռնկի

⁴¹ Բ դառն լինի

⁴² Բ > այն

⁴³ Տե՛ս ԱՌԱՒ. Ե. 3-4: ԱՖ ըմբէ

Ժամ զուշդ¹ եւ զմիտքդ ի քեզ կալ,
յորժամ մաւտ ի կին ուրեք հանդի-
պիս, զի մի խաբեսցիս ի խաւսից
նոցա: Եւ աշաւքդ² յեր ալ ի նա³ մի
նայիլ⁴ եւ ոչ զականջդ ի բանս նո-
ցա մատուցանել⁵, եւ մի զմիտքդ
հետ ի⁶ խաւսիցդ նոցա տանիլ⁷:
Այլ հանապազ զահն Աստուծոյ ի
սրտիդ⁸ կալ, եւ զերկիւղ⁹ տանջա-
նացն եւ զահ գեհննոյն¹⁰ եւ զաւր
դատաստանին Աստուծոյ եւ զահեղ
հնչումն¹¹ փողոյն եւ զարարածոց
դղրդիլն¹², զգալարիլն երկնիցն¹³ եւ
զսարսափումն հրեշտակացն յա-
հեղ¹⁴ ձայնէ Որդւոյն¹⁵ Աստուծոյ, զա-
նազան¹⁶ տանջանսն մեղաւորացն:
Զի զինչ մեղք որ գործէ մարդն եւ
ոչ ապաշխարէ¹⁷, ըստ այն մեղացն
զտանջանսն¹⁸ ընդունին: Զի ոմանք
ի հուրն անշէջ երթան, եւ ոմանք
ի տանջանսն յաւիտենից: Կէսք

ի խաւարն անլոյս առաքին, եւ
ոմանք¹⁹ ի տարտարոսն²⁰: Եւ²¹ ոմանց
առնէ²² Աստուած չար պատասխա-
նի որպէս յիմար կուսանացն²³ որ
ասէ, ոչ գիտեմ զձեզ²⁴, գնացէք յի-

¹⁹ Բ > եւ

²⁰ Բ + Կիսոցն դառն տանջանք հանդիպի.
որ անդադար լան եւ ողբան եւ ի խիստ ցա-
ւոցն զատամուքն կրճտեն: Ոմանք հրեղէն
գետք հանդիպին: Եւ ոչ լինի կամուրջանց
անցանելոյ. Այլ ի նմին ընկըղմին անելանե-
լի: Ոմանց տանջող հրէշտակք հանդիպին.
եւ անդադար հարկանեն հրեղէն գաւազա-
նան եւ տանջեն զմէղուցեալն: Կիսոց հրե-
ղէն որդունք հանդիպին որպէս աւժ թիւնա-
ւոր որ ծծեն անդադար: Զոմանց զլեզուէն
կապեալ, ոմանց զաշքն կալեալ, ոմանց զա-
կանջացն. եւ այնպէս ծծելովն չարչարեն:
Որք ոչ են զգուշացել բերանով չաղտեղի
խաւսից. կամ ի բամբասանաց. կամ ի չա-
րախաւսութենէ եւ որ նման է սոցին եւ որք
ականջաւք յայլոց վատ խաւք հեշտացել
են եւ որք աշաւքն յարատ եւ ի նենգութիւն
կամ չարութեամբ նայեցելեան, զայսպի-
սի մեղուցեալքս անդադար ծրծեն թիւնա-
ւոր որդունքն: Կիսոց փակի բերանն եւ ոչ
կարեն խաւսիլ յահէ դատաւորին: Եւ այս
լեզուանիքն են: որք իբրեւ նետիւք լեզու-
աւքն զայլս հարկանեն եւ խոցոտեն: նոքա
յայնժամ պապանձին: Իսկ յիշոցատուքն եւ
անիծողքն որդամբ լցվի բերանք նոցայ եւ ի
հուրն առաքին: Կիսոցն դուռն ողորմութե-
ան փակուի եւ հալածեն զնոսայ յերեսացն
Աստուծոյ: արհամարհել եւ տանել: զոմանց
զմէջն կտրեն հրեղէն սրովն որպէս զչար
ծառայն որ զտերունիսն վատնէր եւ ընդ
վայր ծախէր եւ զիւր ընկէրսն հարկանէր:
Կիսոցն զձեռսն եւ զոտսն կապեն եւ ի հուրն
տանին յարտաքին խաւարն: որպէս զայն որ
ոչ ունէր հանդերձ հարսանեաց: այն որ ոչ
էր զիւր մեղքն խոստովանեալ:

²¹ Բ > եւ

²² Ա արնէ

²³ Բ + Եւ այլոցն անողորմիցն եւ տմարդիցն

²⁴ Բ + զոմանս անիծոք դատապարտէ եւ
ուրանայ զնոսայ

¹ ԱԲ զուշտ

² Բ աշաւքտ

³ Բ նայ

⁴ Ա նաիլ Բ հայիլ

⁵ Բ մատուցաներ

⁶ Բ ի հետ

⁷ Բ տանիլ

⁸ ԱԲ սրտիտ

⁹ ԱԲ զերկեղ

¹⁰ Բ գէհննին

¹¹ Բ զահեղ հնչումն

¹² Ա զղորդիլն Բ զղորդելոյն

¹³ Բ երկնից

¹⁴ Ա ի յահեղ

¹⁵ ԱԲ որդոյն

¹⁶ Բ զտանջանսն զանազան

¹⁷ Բ զի զինչ որ գործեն մարդիկ մեղս եւ
ոչ ապաշխարեն] զի զինչ մեղք որ գործէ
մարդն եւ ոչ ապաշխարէ

¹⁸ Բ + եւ

նէն ի հուրն անշէջ¹: Որպէս² մարգարէն ասէ, թէ հուրն նոցա³ ոչ շիջանի եւ որդն ոչ մեռանի⁴: Այս ամենայն նոցա է պատրաստած որ աստ շարաշար անցուցին զիրեանց կեանքն եւ անապաշխար մեռան⁵: Եւ այլ⁶ ամենայն զանազան տանջանքս⁷ ահագին զոր⁸ լեզուաւ⁹ ոչ կարէ պատմել¹⁰ մարդ¹¹ զոր պատրաստեալ է¹² ոչ վասն մարդկան, այլ¹³ սատանայի եւ կամարարաց նորա¹⁴: Իսկ դու զայս ամենայն զմտաւ ած եւ զահն Աստուծոյ¹⁵ ի միտդ կալ եւ զմահին արն¹⁶ որ ոչ մոլորիս¹⁷ եւ անկանիս ի¹⁸ տանջանսն յաւիտենից: Եւ յի-

շեա¹⁹ զբանն Աստուծոյ որ ասէ, թէ²⁰ ուր ես եմ անդ եւ պաշտաւնեայն²¹ իմ եղիցի²²: Արդ որդեակ պաշտեա²³ զԱստուած սրտի մտաւք եւ հաւատովք²⁴, եւ ում որ հանդիպիս ի հնազանդութեան կաց²⁵: Թէ²⁶ աւագի թէ²⁷ եկեղեցւոյ²⁸ առաջնորդի որ չափ որ քո կարդ է²⁹ ի հնազանդութեան կացչիր³⁰, զի ուր Աստուած է եւ դու անդ լինիցիս ընդ Քրիստոսի բազմելով, զի նա³¹ եկն եւ ծառայեաց մեզ եւ մերում բնութեանս, եւ հնազանդ եղեւ մահու չափ եւ մահու խաչի: Վասն որոյ եւ Աստուած զնա³² բարձրացոյց, եւ այսպէս³³ զքեզ բարձրացուցէ ի փառս արքայութեան իւրոյ³⁴: Եւ այլ ասաց, թէ երանի՜ որ սուրբ են սրտիւք³⁵ խոնարհ հոգով, զի նոքա³⁶ զԱստու-

¹ Տէ՛ս ՄԱՏՔ. ԻՆ. 12: Բ էթէ երթայք յինէն անիծեալք եւ այլ ահագին սպառնալիքն] գնացէք յինէն ի հուրն անշէջ

² Բ Զոր] Որպէս

³ Բ նոցայ

⁴ Տէ՛ս ՄԱՐԿ. Թ. 47

⁵ Բ այն մեղաւորացն է պատրաստել: Որ աստ շարաշար կենալք անցուցանեն զկենս իւրեանց եւ անխաւստովան եւ անապաշխար մեռանին:] Այս ամենայն նոցա է պատրաստած որ աստ շարաշար անցուցին զիրեանց կեանքն եւ անապաշխար մեռան

⁶ Բ այս] այլ

⁷ Բ + եւ

⁸ Ա զոլ

⁹ Բ > լեզուաւ

¹⁰ Բ պատմել + զազգի ազգի եւ պէս պէս տանջարանացն

¹¹ Բ > մարդ

¹² Բ պատրաստեց Աստուած] պատրաստեալ է

¹³ Բ + վասն

¹⁴ Բ նորայ

¹⁵ Բ > Աստուծոյ

¹⁶ Բ > եւ մահին արն

¹⁷ Բ չմոլորիս

¹⁸ Բ չանկանիս յայնպիսի

¹⁹ ԱԲ յիշեայ

²⁰ Բ էթէ

²¹ Բ պաշտաւնայն

²² Տէ՛ս ՂՈՒԿ. ԺԲ. 46

²³ ԱԲ պաշտեայ

²⁴ Բ հաւատով + ծառայութեան Աստուծոյ

²⁵ Բ ի հնազանդութիւն] ի հնազանդութեան կաց

²⁶ Բ էթէ

²⁷ Բ եւ էթէ

²⁸ Ա եկեղեցոյ Բ եկեղեցո

²⁹ Բ կարն իցէ] կարդ է

³⁰ Բ ջանայ եւ կատարեայ զհնազանդութիւն ծառայութեան] ի հնազանդութեան կացչիր

³¹ Բ նայ

³² Բ զնայ

³³ Բ այսպէս եւ

³⁴ Բ եւ ի պատիւ ճոխութեան] իւրոյ

³⁵ Բ + եւ

³⁶ Բ նոքայ

ած տեսցեն¹: Եւ այն է զԱստուած տեսնուլն² եւ ընդ նմա³ յարքայութեան բազմիլն⁴, որ զսիրտդ սուրբ պահես ի յամենայն շարեաց⁵, եւ⁶ յազարհուութենէ, եւ⁷ յոխակալութենէ, եւ⁸ նախանձութենէ, եւ⁹ շարակնութենէ, եւ¹⁰ մեծաբանութենէ, եւ¹¹ կամապաշտութենէ¹², եւ¹³ յաղտեղի բանից¹⁴, եւ¹⁵ ի հայհոյութենէ, եւ զրաբանութենէ, եւ¹⁶ ի պիղծ¹⁷ եւ ի զազիր գործոց¹⁸, եւ ի պոռնկութենէ¹⁹: Զի այս ամենայն է²⁰ որ պղծէ²¹ զսիրտն եւ հանէ²² ի յԱստուծոյ տեսութենէն: Եւ յորժամ զսիրտդ յայս²³ ամենայն շարեաց սուրբ պահես, յայնժամ²⁴ զԱստուած տեսանես եւ

¹ ՏԵՍ ՄԱՏԹ. Ե. 8

² Բ զնայ տեսանելն] զԱստուած տեսնուլն

³ ԱԲ նմայ

⁴ Բ յարքայութիւն բազմեալն

⁵ Բ արդ որդեկ սուրբ պահեայ զսիրտդ քոյ ամենայն շարեաց] որ զսիրտդ սուրբ պահես ի յամենայն շարեաց

⁶ Բ > եւ

⁷ Բ > եւ

⁸ Բ ի

⁹ Բ ի

¹⁰ Բ ի

¹¹ Բ ի

¹² Բ + ի նենգութենէ, ի քէն ունելոյ ընդ մարդոյ

¹³ Բ ի

¹⁴ Բ + ի կատակելոյ

¹⁵ Բ > եւ

¹⁶ Բ > եւ

¹⁷ ԱԲ պեղծ

¹⁸ Բ + եւ ի բանից

¹⁹ ԱԲ պոռնկութենէ

²⁰ Բ են

²¹ Բ պղծեն

²² Բ հանեն

²³ Ա ի յայս

²⁴ Ա յայն ժամն

ուրախանայ հոգիդ²⁵ եւ համարձակ խաւսիս ընդ Աստուծոյ²⁶: Եւ այնպէս համարի Աստուած զքեզ²⁷ իբրեւ զմիայնակեացս²⁸ ի լերինս: Զի այնոք²⁹ որ թեպէտ³⁰ ի յաշխարհի են եւ զիրեանց կեանքն սրբութեամբ եւ պարկեշտութեամբ պահեն եւ լիւնին ողորմած եւ աղքատասէր, եւ մարդասէր, խոնարհ եւ անինչք³¹, նոքա³² իբրեւ զմիայնակեացս³³ են ի լերինս³⁴ եւ յաշխարհի: Եւ են բազումք որ զայս առաքինութիւնս³⁵ ունին, աստ երանին եւ անդ պսակին յարքայութեան³⁶ Քրիստոսի Աստուծոյ մերոյ³⁷: Զի որպէս տանջանք են բազում եւ ազգի ազգի, նոյնպէս³⁸ հանգիստ³⁹ եւ⁴⁰ մշտնջենաւոր⁴¹ եւ ազգի ազգի: Զի ոմանք պսակին լուսեղէն պսակաւքն եւ ընդ աջմէ Աստուծոյ բազմին: Եւ որք նման են⁴² նմայ⁴³ լինին ի փառս հայրենիս:

²⁵ ԱԲ հոգիտ

²⁶ Ա յԱստուծոյ

²⁷ Բ զքեզ Աստուած

²⁸ Բ զմիայնակեաց

²⁹ Բ այն

³⁰ ԱԲ թեպէտ

³¹ Բ անինչ

³² Բ նոքայ

³³ Ա միայնակեացս

³⁴ Բ լինին] են ի լերինս եւ

³⁵ Բ զայդ առաքինութիւնդ

³⁶ Բ յարքայութիւն

³⁷ Բ > մերոյ

³⁸ Բ + եւ

³⁹ Ա հանկիստ

⁴⁰ Բ > եւ

⁴¹ ԱԲ մշտնջենաւոր

⁴² Բ > են

⁴³ ԱԲ նմայ

Զոմանս յառաջ կոչէ Աստուած¹ եւ ի Հաւրէն իւրմէ² աւրհնէ եւ ասէ³, եկայք աւրհնեալք⁴ Հաւր իմոյ⁵: Ոմանց⁶ շնորհակալի Աստուած⁷ եւ իր նման ողորմած խոստովանի⁸ եւ բարերար: Ոմանց զփեսայն երկնաւոր ցուցանէ: Ոմանց սրաթեւ իբրեւ զաղաւնի պատրաստէ որ թռչին ընդառաջ⁹ Աստուածորդոյն եւ սլանան անցանեն ընդ գետս¹⁰: Ոմանք որ կուսանք եւ պարկեշտք լինին¹¹ եւ բարէգործք, նոցա պսակն պայծառ լինի քան զամենէցուն¹²: Եւ որք¹³ խոնարհ են սրտիւք եւ հեզ, նոքա¹⁴ զերկնից երկիրն ժառանգեն¹⁵: Ոմանց զանմահ պտուղն տայ

կերակուր եւ յանմահ աղբիւրէն արբուցանէ, որ աստ ալլոց տան կերակուր: Ոմանց զդրախտն կենաց եւ անմահութիւն¹⁶ պարգեւէ: Եւ ալլ անճառելի եւ անպատում¹⁷ են բարիքն զոր խոստացաւ Աստուած սիրելեաց իւրոց: Որպէս¹⁸ առաքեալն Պաւլոս ասէ, թէ զոր ակն ոչ ետես¹⁹ եւ ունկն ոչ լուաւ եւ ի սիրտ²⁰ մարդոյ ոչ անկաւ²¹: Արդ որդեակ զայս ամենայն գրեցաք ձեզ, զի ի տանջանացն երկնչիք եւ²² զերծանիք ի նմանէ: Եւ լինիք ժառանգաւորք²³ արքայութեան երկնից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր²⁴, որում փառք յաւիտեանս, ամէն:



¹ Քրիստոս] Աստուած

² Բ > իւրմէ

³ Բ ասելով] եւ ասէ

⁴ Ա աւրհնեալք Բ աւրհնեալք

⁵ Տե՛ս ՄԱՏԹ. ԻԵ. 34: Բ + եւ

⁶ Բ զոմանց

⁷ Բ > Աստուած

⁸ Բ եւ ողորմած եւ իւր նման խոստովանի] եւ իր նման ողորմած խոստովանի

⁹ Ա ընդ յառ

¹⁰ Բ + հրեղէնս

¹¹ Բ կուսանք լինին եւ պարկեշտք] կուսանք եւ պարկեշտք լինին

¹² Բ զամենէցուն

¹³ Բ որ

¹⁴ Բ նոքա

¹⁵ Ա ժառանկեն

¹⁶ Բ անմահութեան] անմահութիւն

¹⁷ Բ անպատում

¹⁸ Բ + եւ

¹⁹ ԱԲ էտես

²⁰ Բ սրտ

²¹ Տե՛ս Ա. ԿՈՐՆԹ. Բ. 9: Բ + զայն պատրաստեաց Աստուած սիրելեց իւրոց եւ կամարարաց

²² Բ կամ յահէ տանջանացն երկուցելք] ի տանջանացն երկնչիք եւ

²³ ԱԲ ժառանկաւորք

²⁴ Բ եւ այն սիրովն պահեցէք զձեզ ի մեղաց եւ ոչ ծուլանայք ալլ ջանացէք արիութեամբ հասանել այն կենացն եւ երկնային ուրախութեանցն եւ անթառամ պսակացն: որում զմեզ զամէնիսեան արժանի արասցէ Քրիստոս Աստուած մեր.] երկնից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր